

ՓՈԽԱՐԻՆԵԼՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԸ

Յոթ Խոսք Խաչի Վրայից
Մաս 4

«Եվ ժամը վեցիցը խավար եղավ բոլոր երկրի վրա մինչև ինը ժամը: Եվ ժամը իննի դեմ, Հիսուսը մեծ ձայնով աղաղակեց և ասեց. Էլի՛ Էլի՛ լա՛մա սաբաթթանի. այսինքն, Իմ Աստված՝ իմ Աստված, ինչո՞ւ թողեցիր ինձ:» Մատթեոս 27:45-46

Ի՞նչ Կատարվեց

Հիսուսը Դարձավ Ինձ Փոխարինողը

«Եվ նա քավություն է մեր մեղքերի համար. և ոչ միայն մերինների բայց բոլոր աշխարհքի էլ:» Ա Հովհաննես 2:2

«Որովհետև Աստված նրան, որ մեղք չգիտեր, մեզ համար մեղք արավ. որ մենք Աստծո արդարությունը լինենք նրանում:» Բ Կորնթացիս 5:21

Ի՞նչ է Դա Սովորեցնում Մեզ

1. Աստված սիր է

«Մուրք, Մուրք, Մուրք, Տեր Աստված ամենակարող, որ էր, և որ է, և որ գալու է:» Հայտնություն 4:8

«Դու, որ աչքերդ մաքուր են չարություն տեսնելուց, և անիրավություն մտիկ տալ չես կարող.» Ամբակում 1:13

2. Մեղքը գարշելի է

❖ Մեղքը հեռացնում է ինձ Աստծուց

«Այլ ձեր անօրենություններն են բաժանում ձեր և ձեր Աստծո մեջտեղը. և ձեր մեղքերը ծածկեցին նրա երեսը ձեզանից որ չլսի:» Եսայիա 59:2

❖ Մեղքը տանջում է ինձ

«Իմ անօրենությունները գլխից վեր բարձրացան. ինչպես մեծ ծանր բեռ ծանր են ինձ վրա:» Մաղմոս 38:4

❖ Մեղքը դատապարտում է ինձ

«Աստված արդար դատավոր է, և Աստված ամեն օր բարկանում է ամբարշտի վրա:» Մաղմոս 7:11

«Մեղքի վարձքը մահն է. բայց Աստծո շնորհքը՝ հավիտենական կյանք՝ մեր Տեր Հիսուս Քրիստոսի ձեռովը:» Հռով 6:23

3. Փրկությունը թանկ արժի

«Որին Աստված առաջուց սահմանեց քավություն լինելու համար հավատալով նրա արյունովը, որ իր արդարությունը ցույց տա, այն առաջուց գործված մեղքերի թույլտվության համար՝ Աստծո ներելու ժամանակին:» Հռովմայեցիս 3:25

«Քրիստոս գնեց մեզ օրենքի անեծքիցը մեզ համար անեծք լինելով.[վասնզի գրված է թե Անիծյալ լինի ամեն փայտից կախվածը:] Գաղատացիս 3:13

Ի՞նչ Պիտի Լինի Իմ Պատասխանը

1- Դառնալ իմ մեղքերից և վստահել Հիսուսին, որ փրկի ինձ

«Այսինքն Աստծո արդարությունը որ Հիսուս Քրիստոսի հավատքիցն է, այն ամենի համար և ամենի վրա, որ հավատում են. որովհետև խտրություն չկա:» Հռովմայեցիս 3:22

«Եթե մենք ճշմարտության գիտությունն ընդունելով հետո հոժար կամքով մեղք գործենք, այլևս նրանից հետո մեղքերի համար գոն չի մնում:» Եբրայեցիս 10:26

2- Ապրել երախտագիտության զգացումով

«Աստծով էլ պարծենում ենք՝ մեր Տեր Հիսուս քրիստոսի ձեռովը, որով հիմա հաշտությունն ընդունեցինք:» Հռով 5:11

3- Փորձության մեջ հիշեմ թե իմ մեղքը ի՞նչ արժեցավ Հիսուսին

«Ոչ թե ապականացու արծաթով կամ ոսկով փրկվեցաք ձեր հայրենավանդ ունայն վարմունքիցը. Այլ Քրիստոսի պատվական արյունովը, ինչպես մի անբիծ և անարատ գառի:» Ա Պետրոս 1:18-19

4- Ուրիշներին հաղորդել բարի լուրը

«Տերը չի ուշացնել խոստումը, ինչպես ոմանք ուշացնել են կարծում, բայց երկայնամիտ է լինում մեզ վրա, որովհետև չի կամենում որ կորչողներ լինեն, բայց որ ամենն ապաշխարության հասնեն:» Բ Պետրոս 3:9